# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**03 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2275-Ա**

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Առնակ Գրիգորյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Առնակ Գրիգորյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Հ. Այվազովսկու փողոց թիվ 7 հասցեում բնակելի տան, տնտեսական շինության և պարսպի կառուցման համար:
2. Առնակ Գրիգորյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Առնակ Գրիգորյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 03
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**03 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2276-Ա**

## ՀՀ ՇՄՆ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ 04022673 ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ՝ N40324364 E44581539 ՏԵՂԱԴԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության 04022673 արձանագրության համաձայն՝ ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին անհատույց և մշտական իրավունքով պատկանող հողատարածքում անհայտ ֆիզիկական անձի կողմից տեղադրված ինքնակամ տեղադրված շինությունների փաստը՝ պարզեցի. ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի թիվ 76 զեկուցագրի համաձայն՝ էկոպարեկային ծառայությունը N40324364 E44581539 տեղադիրք ունեցող հողատարածքում հայտնաբերել է ինքնակամ տեղադրված մետաղական վագոն-տնակներ: Սևանի համայնքապետարանը օգտագործել է բոլոր հնարավոր միջոցները իրավախախտ ֆիզիկական անձի ինքնությունը պարզելու համար: Իրականացվել է այց տարածք, որը գտնվում է նախկին քաղաքային լողափից դեպի արևելք, սակայն հնարավոր չի եղել հայտնաբերելու իրավախախտ անձին: Իրավախախտման դեպքի մանրամասն բացահայտման համար Սևան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է վարույթի կասեցման որոշում: Սակայն այդ ընթացքում ևս հնարավոր չի եղել հայտնաբերել իրավախախտին: Հիմնավորված է այն փաստը, որ խախտվել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության կամ տեղադրման թույլտվության, ինքնակամ կառուցվել կամ տեղադրվել է շինություններ: Խախտվել է նաև ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները՝ այն է իրավախախտ անձը ապօրինի զբաղեցնում է հողատարածք: Հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող, պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի

ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, 154-րդ հոդվածի, 48-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի ե[1] հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել N40324364 E44581539 տեղադիրք ունեցող հողատարածքում առկա ինքնակամ տեղադրված շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Իրավախախտ ֆիզիկական անձի նկատմամբ վարչական տույժի նշանակման մասով վարույթը կարճել:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 03
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

03 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2277-Ա

## ՀՀ ՇՄՆ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ 040226101 ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ՝ N40335460 E44595383 ՏԵՂԱԴԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության 040226101 արձանագրության համաձայն՝ ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին անհատույց և մշտական իրավունքով պատկանող հողատարածքում անհայտ ֆիզիկական անձի կողմից տեղադրված ինքնակամ տեղադրված շինությունների փաստը՝ պարզեցի. ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի թիվ 145 զեկուցագրի համաձայն՝ էկոպարեկային ծառայությունը N40335460 E44595383 տեղադիրք ունեցող հողատարածքում հայտնաբերել է ինքնակամ տեղադրված երեք մետաղական տնակ՝ քարից հիմքով, մեկ մետաղական տնակ, տասներեք մետաղական տաղավար, մեկ քարից շինություն, հավաքովի վրան-սրճարան և մեկ սանհանգույց: Սևանի համայնքապետարանը օգտագործել է բոլոր հնարավոր միջոցները իրավախախտ ֆիզիկական անձի ինքնությունը պարզելու համար: Իրականացվել է այց տարածք, որը գտնվում է Սևանի թերակղզում, սակայն հնարավոր չի եղել հայտնաբերելու իրավախախտ անձին: Իրավախախտման դեպքի մանրամասն բացահայտման համար Սևան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է վարույթի կասեցման որոշում: Սակայն այդ ընթացքում ևս հնարավոր չի եղել հայտնաբերել իրավախախտին: Հիմնավորված է այն փաստը, որ խախտվել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության կամ տեղադրման թույլտվության, ինքնակամ կառուցվել կամ տեղադրվել է շինություններ: Խախտվել է նաև ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները՝ այն է իրավախախտ անձը ապօրինի զբաղեցնում է հողատարածք: Հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող՝ ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական

օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, 154-րդ հոդվածի, 48-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի ե[1] հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել N40335460 E44595383 տեղադիրք ունեցող հողատարածքում առկա ինքնակամ տեղադրված շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Իրավախախտ ֆիզիկական անձի նկատմամբ վարչական տույժի նշանակման մասով վարույթը կարճել:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 03
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

03 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2278-Ա

## ՀՀ ՇՄՆ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ 04022679 ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ՝ N4032119 E44581768 ՏԵՂԱԴԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության 04022679 արձանագրության համաձայն՝ ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին անհատույց և մշտական իրավունքով պատկանող հողատարածքում անհայտ ֆիզիկական անձի կողմից տեղադրված ինքնակամ տեղադրված շինությունների փաստը՝ պարզեցի. ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի թիվ 85 զեկուցագրի համաձայն՝ էկոպարեկային ծառայությունը N4032119 E44581768 տեղադիրք ունեցող հողատարածքում հայտնաբերել է ինքնակամ տեղադրված՝ երկու մետաղական վագոն-տնակ, երկու մետաղական զրուցարան, մետաղական ցանկապատ և երկու սանհանգույց: Սևանի համայնքապետարանը օգտագործել է բոլոր հնարավոր միջոցները իրավախախտ ֆիզիկական անձի ինքնությունը պարզելու համար: Իրականացվել է այց տարածք, որը գտնվում է նախկին քաղաքային լողափից դեպի արևելք, սակայն հնարավոր չի եղել հայտնաբերելու իրավախախտ անձին: Իրավախախտման դեպքի մանրամասն բացահայտման համար Սևան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է վարույթի կասեցման որոշում: Սակայն այդ ընթացքում ևս հնարավոր չի եղել հայտնաբերել իրավախախտին: Հիմնավորված է այն փաստը, որ խախտվել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության կամ տեղադրման թույլտվության, ինքնակամ կառուցվել կամ տեղադրվել է շինություններ: Խախտվել է նաև ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները՝ այն է իրավախախտ անձը ապօրինի զբաղեցնում է հողատարածք: Հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող՝ ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարծքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-

րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, 154-րդ հոդվածի, 48-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի ե$^{1}$ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ**.

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել N4032119 E44581768 տեղադիրք ունեցող հողատարածքում առկա ինքնակամ տեղադրված շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Իրավախախտ ֆիզիկական անձի նկատմամբ վարչական տույժի նշանակման մասով վարույթը կարճել:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 03
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**03 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2279-Ա**

### ՀՀ ՇՄՆ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ 04022664 ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ՝ N4053609 E4496982 ՏԵՂԱԴԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության 04022664 արձանագրության համաձայն՝ ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին անհատույց և մշտական իրավունքով պատկանող հողատարածքում անհայտ ֆիզիկական անձի կողմից տեղադրված ինքնակամ տեղադրված շինությունների փաստը պարզեցի՝ ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի թիվ 64 զեկուցագրի համաձայն՝ էկոպարեկային ծառայությունը N4053609 E4496982 տեղադիրք ունեցող հողատարածքում հայտնաբերել է ինքնակամ տեղադրված մետաղական վագոն-տնակ: Սևանի համայնքապետարանը օգտագործել է բոլոր հնարավոր միջոցները իրավախախտ ֆիզիկական անձի ինքնությունը պարզելու համար: Իրականացվել է այց տարածք, որը գտնվում է նախկին քաղաքային լողափից դեպի արևելք, սակայն հնարավոր չի եղել հայտնաբերելու իրավախախտ անձին: Իրավախախտման դեպքի մանրամասն բացահայտման համար Սևան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է վարույթի կասեցման որոշում: Սակայն այդ ընթացքում ևս հնարավոր չի եղել հայտնաբերել իրավախախտին: Հիմնավորված է այն փաստը, որ խախտվել են ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության կամ տեղադրման թույլտվության, ինքնակամ կառուցվել կամ տեղադրվել են շինություններ: Խախտվել է նաև ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները՝ այն է իրավախախտ անձը ապօրինի զբաղեցնում է հողատարածք: Հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող՝ ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների՝ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի

ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, 154-րդ հոդվածի, 48-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի ե[1] հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել N4053609 E4496982 տեղադիրք ունեցող հողատարածքում առկա ինքնակամ տեղադրված շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Իրավախախտ ֆիզիկական անձի նկատմամբ վարչական տույժի նշանակման մասով վարույթը կարճել:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 03
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**03 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2280-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 1836-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 23-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի տնօրինման մասին» N 1836-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 2-րդ կետում՝ «Քաղ. Վարդան Արամի Մխեյանի» բառերի փոխարեն կարդալ «Քաղ. Վարդան Սուրենի Մխեյանի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 03
ք.Սևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**03 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2281-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Էլինար Սուրենի Միերյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 137 / 2 հասցեում կառուցված 28.3քմ մակերեսով ավտոտնակը և 28.3քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 137 / 2 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 21.04. 2026թ. թիվ 949-Ա որոշմամբ՝ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 26.08.2026թ. պետական գրանցում ստացած 28.3քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1969դրամ, զբաղեցրած 28.3քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 4441.8դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Էլինար Սուրենի Միերյանին:
2. Քաղ. Էլինար Սուրենի Միերյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 03
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**03 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2282-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Մանվել Բադեյանի դիմումը՝ Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 12-րդ փողոց թիվ 20 հասցեում կառուցված 151. 61քմ մակերեսով կիսակառույց շինությունը, 35. 52քմ մակերեսով պարիսպները և 991. 9քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Ծովագյուղ 12-րդ փողոց թիվ 20 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 21. 07. 2026թ. թիվ 1823-Ա որոշման համաձայն՝ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 24. 08. 2026թ. պետական գրանցում ստացած 151. 6քմ մակերեսով կիսակառույց շինությունը՝ 1քմ՝ 1748 դրամ, 35. 52քմ մակերեսով պարիսպները՝ 1քմ՝ 1748դրամ, զբաղեցրած 991. 9քմ մակերեսով հողատարածքը՝ որից՝ 561. 3քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 514. 8դրամ, 430. 6քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 1544. 4դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Մանվել Սամվելի Բադեյանին:
2. Քաղ. Մանվել Սամվելի Բադեյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 03
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**03 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2283-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, «ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N 550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Բագրատ Խնկոյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Լճափնյա փողոց թիվ 7 բնակելի տուն հասցեում անշարժ գույքի /վկայական՝ 10082026-05-0050/ զբաղեցրած 0.17 հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Բագրատ Վահանի Խնկոյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Լճափնյա փողոց թիվ 7 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի զբաղեցրած 0.17հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.01645հա մակերեսով / հասցե՝ Սևան համայնք, ք. Սևան Ա. Մանթաշովի փողոց թիվ 5 հողամաս, վկայական՝ 31082026-05-0030/՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Բագրատ Վահանի Խնկոյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 1քմ՝ 2887. 5 դրամ, վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 03
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**03 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2284-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 12. 04. 2001թ. N 286 որոշման 43-րդ կետով և հիմք ընդունելով քաղ. Սանասար Սաղաթելյանի դիմումը՝ վարձակալության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող 0.761994հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 04022026-05-0049/ ուղղակի վաճառքի կարգով իրեն օտարելու մասին, նկատի ունենալով, որ հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Վարձակալության իրավունքով Սանասար Գուրգենի Սաղաթելյանի պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության 0.761994հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարել Սանասար Գուրգենի Սաղաթելյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 939150 դրամ վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 03
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

03 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2285-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 8-րդ, 8.1-րդ 9-րդ, 11-րդ, 18-րդ կետերով, հիմք ընդունելով քաղ. Ժենյա Վարդանյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 181 / 22 հասցեում գտնվող 89. 4քմ մակերեսով հողատարածքում 2015թ. ինքնակամ կառուցված ավտոտնակն օրինական ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Ժենյա Մնացականի Վարդանյանին պատկանող Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 181 / 22 հասցեում գտնվող 89. 4քմ մակերեսով հողատարածքում 2015թ. ինքնակամ կառուցված 23. 32քմ շինությունը ճանաչել օրինական՝ համայնքի բյուջե մուծելով օրինականացվող ավտոտնակի 1քմ-ի համար՝ 1673 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 03
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**03 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2286-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Սաշա Մկրտիչի Մինասյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 3 / 89 հասցեում կառուցված 30.0քմ մակերեսով ավտոտնակը և 30. 0քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 3 / 89 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 24.07. 2026թ. թիվ 1870-Ա որոշման համաձայն՝ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 25. 08. 2026թ. պետական գրանցում ստացած 30.0քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1969դրամ, զբաղեցրած 30.0քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 4441.8դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Սաշա Մկրտիչի Մինասյանին:
2. Քաղ. Սաշա Մկրտիչի Մինասյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 03
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**04 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2287-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, Սևան համայնք, գ. Լճաշեն, 7 հասցեում գտնվող 15հա մակերեսով անշարժ գույքը /վկայական՝ 24012025-05-0052/ առանձնացնելու և առանձնացված անշարժ գույքերի համար նոր հասցեներ տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Լճաշեն, 7 հասցեում գտնվող 15հա մակերեսով անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝
1) առաջին միավոր գույքի՝ 10. 5հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Լճաշեն թիվ 7 հողամաս հասցե:
2) երկրորդ միավոր գույքի 4. 5հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Լճաշեն թիվ 8 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 04
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**04 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2288-Ա**

## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Գևորգ Աբրահամյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Գևորգ Աբրահամյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 32 / 1 հասցեում գտնվող հողատարածքում երկհարկանի բնակելի տան և ապրսպի կառուցման համար:
2. Գևորգ Աբրահամյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 04
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**04 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2289-Ա**

### ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, «Վարչական հիմունքների և Վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի և 2-րդ կետի ա) ենթակետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Կասեցնել ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի 19-1312 գրության և Ձ-217 զեկուցագրի հիման վրա հարուցված վարչական վարույթը :
2. Վարույթը վերսկսել կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալուց հետո:
3. Վարչական վարույթի կասեցման մասին իրազեկել ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայությանը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 04
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**04 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2290-Ա**

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Հեղինե Աբրահամյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հեղինե Աբրահամյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 4 / 11 հասցեում գտնվող հողատարածքում գրասենյակային մասով առևտրի կետի կառուցման համար:
2. Հեղինե Աբրահամյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Հեղինե Աբրահամյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԳԵՅ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 04
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**04 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2291-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 2109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի օգոստոսի 14-ի «Բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին» 2109-Ա որոշման նախաբանում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «քաղ. Ռուդիկ Մանուկյանի դիմումը» բառերի փոխարեն կարդալ «քաղ. Ռուդիկ Հակոբյանի դիմումը» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 04
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

04 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2292-Ա

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք –1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.12000հա մակերեսով հողամասը /գ. Գեղամավան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության, տրամադրել Սևան համայնք, գյուղ Գեղամավան, 1-ին փողոց, 6-րդ նրբանցք 1-ին փակուղի, 4 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 2-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 04
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**07 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2293-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, «ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N 550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Մերի Մխիթարյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Լճաշեն, 18-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 18062024-05-0055/ զբաղեցրած 0.11819 հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Մերի Բորիկի Մխիթարյանին պատկանող, Սևան համայնք, գ. Լճաշեն, 18-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող անշարժ գույքի զբաղեցրած 0.11819 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.1177 հա մակերեսով /հասցե՝ Սևան համայնք, գ. Լճաշեն, 18-րդ փողոց թիվ 13 հողամաս, վկայական՝ 04082026-05-0113/՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Մերի Բորիկի Մխիթարյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 1քմ՝ 792 դրամ, վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 07
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**07 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2294-Ա**

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն, 18. 05,2006թ. թիվ 912-Ն որոշումներով և հիմք ընդունելով քաղ. Նադյա Մխիթարյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Մյասնիկյան փողոց թիվ 47 հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 714. 0քմ մակերեսով հողատարածքը և հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփականություն իրավունք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Նադյա Ռաշիդի Մխիթարյանին /ծնված՝ 02. 09. 1946թ. / պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Մյասնիկյան փողոց թիվ 47 հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 714. 0քմ մակերեսով հողատարածքին կից՝ 110. 0քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Նադյա Մխիթարյանի սեփականության իրավունքը:
2. Նադյա Ռաշիդի Մխիթարյանին պատկանող 824. 0քմ մակերեսով հողատարածքում 1996թ. կառուցված 144. 62քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 112. 14քմ/, 12. 50քմ մակերեսով ծեղնահարկը /ներքին մակերեսը՝ 9. 21քմ/, 8. 01քմ մակերեսով բաց պատշգամբը, 6. 83քմ մակերեսով աստիճանահարթակը, 1978թ. կառուցված 47. 71քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 42. 58քմ/, 1972թ. կառուցված 36. 41քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 30. 94քմ/ և 1978թ. կառուցված 2. 47քմ կառուցված պարիսպը ճանաչել Նադյա Ռաշիդի Մխիթարյանի սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ա. Մյասնիկյան փողոց թիվ 47 բնակելի տուն հասցե:

3. Նադյա Ռաշիդի Մխիթարյանին պատկանող 824. 0քմ մակերեսով հողատարածքում 2016թ. կառուցված 28. 68քմ մակերեսով հավաբունը /ներքին մակերեսը՝ 25. 20քմ/ ճանաչել ինքնակամ շինություն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 07
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**07 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2295-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Աստղիկ Հայրապետյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 63 / 22 հասցեում կառուցված 22. 40 քմ մակերեսով ավտոտնակը և 22. 40 քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ կիսակառույց շինությունը և զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 63 / 22 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 21. 07. 2026թ. թիվ 1822-Ա որոշման համաձայն՝ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 26. 08. 2026թ. պետական գրանցում ստացած 22. 40 քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673դրամ և զբաղեցրած 22. 40քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Աստղիկ Ասատուրի Հայրապետյանին:
2. Քաղ. Աստղիկ Ասատուրի Հայրապետյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

07 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2296-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 26 -րդ, 27-րդ կետերով, հիմք ընդունելով Գարիկ Անտոնյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց, 11 բազմաբնակարան բնակելիշենքի թիվ 17 բնակարանին կից՝ սեփականատիրոջ կողմից ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, նկատի ունենալով որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Գարիկ Կառլենի Անտոնյանին պատկանող՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց, 11 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 17 բնակարանին /վկայական N24122015-05-0002/ կից՝ սեփականատիրոջ կողմից 2015թ. ինքնակամ կառուցված 18. 0 քմ մակերեսով բնակարանի /ներքին մակերեսը՝ 14. 9 /, 3. 8քմ մակերեսով բաց պատշգամբի կառուցման աշխատանքները ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 20264ZBH29/՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 590.7 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 07
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**07 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2297-Ա**

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԱԴԻՐՔՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 2002 թվականի դեկտեմբերի 26-ի «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» N 510-Ն օրենքի 5-րդ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ Կառավարության 21.07.2005 թվականի թիվ 1766-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 11. 12. 2023թ. տրված N 2-6 դրական եզրակացությամբ հաստատված Վարսեր բնակավայրի գլխավոր հատակագիծը, հիմք ընդունելով քաղ. Սվետլանա Մանուկյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Վարսեր, Երևանյան խճուղի 6 հասցեում գտնվող 0. 0250 հա մակերեսով հողատարածքում ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, նկատի ունենալով որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Սվետլանա Մանուկյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Վարսեր, Երևանյան խճուղի 6 հասցեում գտնվող 160.55 քմ մակերեսով /ներքին մակերեսը՝ 115.90 քմ/ երկաթբետոնյա հիմքերի կառուցման աշխատանքները ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026JLLFBT/՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 1748 դրամ՝ տրամադրելով Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Վարսեր, Երևանյան խճուղի, 12 հիմք հասցե:
2. Ուղղել և հաստատել՝ սեփականության իրավունքով Սվետլանա Մանուկյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Վարսեր, Երևանյան խճուղի 12 հիմք հասցեում գտնվող 0. 0250 հա մակերեսով հողամասի տեղադիրքը՝ հիմք ընդունելով լիցենզավորված կազմակերպության կողմից ներկայացված չափագրության արդյունքները:

3. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 07
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**07 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 2298-Ա**

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԸ» ՍՊԸ տնօրեն Հ. Գուլանյանի դիմումը և Սևան համայնքի ավագանու 13. 05. 2026թ. N 63-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Ծովագյուղ հասցեում գտնվող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության 1. 123093հա մակերեսով հողատարածքի / կադաստրային ծածկագիր՝ 05-049-0106-0182/ նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ, տրամադրել Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին թաղամաս թիվ 43 հողամաս :
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 07
ք.Սևան